

## 17 Հոկտեմբեր

Երեսփոխանական ժողովը Սրբազան Պատրիարքին ուղերձ մը ուղղեց ի պատասխանի այն ճառին, զոր նորին Սրբազնութիւնն երեսփոխանական ժողովի բացման առթիւ դրկած էր յիշեալ ժողովին:

Երեսփ. ժողովն կյայտնէ, թէ Հայկական խնդրոյն համար վստահ է թէ՛ Աստուծոյ ողորմութեանը, թէ՛ կառավարութեան արդարասիրութեանը եւ թէ՛ Ս. Պատրիարքին հայրենասիրութեանը: Ուղերձը կը վերջանայ դարձեալ Ս. Պատրիարքին յանձնելով Հայկական խնդրոյն շարունակութիւնը:

Ուղերձին լեզուն ես այնպէս հասկցայ, որ երեսփ. ժողովն աւելի Ս. Պատրիարքին հայրենասիրութեանը վստահ է քան թէ... քան թէ... կառավարութեան արդարասիրութեանը... ըսենք լմննայ:

## 18 Հոկտեմբեր

Բնաւ դասագիրք մ'այնչափ քննադատութեան նիւթ եղած չէր, որչափ որ կ'ըլլայ Եղիշէ վարդապետ Դուրեանի հրատարակած «Ընթացք ի գրոց բարբառը»:

Երկու ամիս է, որ մէկ կողմէն ամեն օր սխալներ կ'գտնեն այդ դասագրքին մէջ, եւ միւս կողմէն արժ. վարդապետը իւր գրքէն սխալ քաղողներուն սխալները կ'գտնէ: Որչափ ալ հայր Եղիշէ համոզուիլ չուզէ եւ ուզած կերպով մեկնէ քերականական կանոնները՝ յայտնի է թէ իւր դասագիրքը ունի սխալներ եւ թերութիւններ: Սակայն մենք իւր ընդդիմախօսներուն պէս չենք ուզեր իւր դասագրքին պատիւը կոտորել եւ զայն բոլորովին անօգուտ համարել. իւր դասագիրքն ամեն դպրոցներու մէջ կրնայ աշակերտներուն տրուիլ իբրեւ վարժութեան գիրք. եւ ուսանողները քերականութեան կանոններուն համեմատ անոր մէջ գտնուած սխալները կուղղեն: Արդէն քերականութեան շատ հեղինակներ այս դրութեան կ'հետեւին, դիտմամբ սխալ կ'գրեն, որպէս զի աշակերտներն կանոններուն համաձայն զանոնք ուղղեն: Հայր Եղիշէի դասագիրքը մեծ յարմարութիւն ունի այս մասին... Իրար անցնելու ի՞նչ կայ:

\*\*

Աշխատելու ետեւէ եմ *Վայելքէն* բան մը հասկնալ, բայց կարելի չէ. եթէ իւր հանդէսին բառարանն ալ մէկտեղ հրատարակած ըլլար՝ այսչափ դժուարութիւն չէի քաշեր: